

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉԱ— ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1986 թվականի հուլիսի 7-ին, երեկոյան ժամը 7-ին, Բյուրականի «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում տեղի ունեցավ նիստ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակության և Մայր Աթոռի ներկայացուցիչների միջև՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի: Մայր Աթոռի կողմից նիստին մասնակցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արք. Մանուկյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը: Տանն Կիլիկիո պատվիրակությունը բաղկացած էր Տ. Մեսրոպ արք. Աշճյանից, Տ. Արամ եպս. Քեշիշյանից, բարձրաստիճան միաբաններ Կիլիկյան Աթոռի, և պրն. Ոսկեբերան Արզումանյանից, ատենադպիր Կենտրոնական Վարչության:

Նիստը բաց արեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, որը ողջունեց Կիլիկյան Աթոռի պատվիրակության անդամների ժամանումը Մայր Աթոռ, բարի գալուստ մաղթեց նրանց՝ նշելով, որ Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի վերջին 30 տարիների հարաբերության պատմության մեջ այս հանդիպումը կարևոր մի հանգրվան է նշում: «Կիլիկյան Աթոռից պաշտոնական ներկայացուցիչներ են ուղարկվել Ս. Էջմիածին, որպեսզի հանգամանորեն պարզեն մեզ Կիլիկյան Աթոռի տեսակետները Հայ Եկեղեցու կազմական մի կանոնադրության մշակման վերաբերյալ, ի հարկին որոշ առաջարկություններ անելով:

Վերջին շրջանում Մայր Աթոռի նախաձեռնությամբ կազմվեց հատուկ մի հանձնախումբ, որը հաջորդական նիստերի ընթացքում պատրաստեց այդպիսի կանոնադրության մի նախագիծ, որից մի օրինակ ուղարկվեց Անթիլիաս, Տանն Կիլիկիո Աթոռի գահակալ Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսին՝ ծանոթանալու և ուսումնասիրելու համար:

Սա մեր կողմից առնված փորձնական մի քայլ է, նպատակ ունենալով ճշտել ընդհանուր կառույցը մեր Եկեղեցու նվիրապետության, Աթոռների իրավասությանց սահմանները և գործածության եղանակները նրանց միջև»:

Անդրադառնալով Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբերություններին, Նորին Սրբությունը նշեց, որ սկզբնական շրջանում այդ հարաբերությունները եղել են լարված և ունեցել են պայքարի բնույթ, սակայն վերջին տարիներին, բարեբախտաբար, կացությունները մեղմ ձևով են արտահայտվում և նույնիսկ շինարար օգտավետ գործածության սկիզբ դառնալու հույս են ներշնչում: «Անցած տարի Փարիզում Մեր հանդիպումը Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի հետ անցավ սիրալիր և եղբայրական մթնոլորտում: Այսօրվա մեր հանդիպման արդյունքները ինչ էլ լինեն, մենք միշտ կմնանք այդ սիրալիրության կգացումի մեջ: Թող Տերը օգնի մեզ, որպեսզի միության ու գործակցության ավելի լավ ճանապարհներ կարողանանք գտնել:

Այժմ մենք սիրով կլսենք Կիլիկյան Աթոռի պատվիրակներին, որոնք եկել են մեզ ներկայացնելու իրենց Աթոռի տեսակետները Հայ Եկեղեցու կանոնադրության վերաբերյալ»:

Տ. Մեսրոպ արք. Աշճյանը, որպես Կիլիկյան Աթոռի պատվիրակության ղեկավար, պատվիրակության անունից շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց կաթողիկոսին բարիգալատյան ջերմ խոսքերի և գոտեպնդիչ արտահայտությունների համար՝ իր հերթին Նորին Սրբությանը փոխանցելով Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի սիրալիր ողջույնները: Ապա Վեհափառ Հայրապետին հանձնեց Տ. Տ. Գարեգին Բ-ի այս առթիվ Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղյալ նամակը, որը և ընթերցվեց սույն նիստում: Նորին Սրբությունը իր գոհունակությունը հայտնեց Տ. Տ. Գարեգին Բ-ի նամակի համար՝ նշելով, որ այն շինարար ոգով խմբագրված նամակ է, որի մեջ դրսևորված են հուսադրիչ տրամադրություններ:

Այնուհետև ելույթ ունեցան Կիլիկյան Աթոռի երեք ներկայացուցիչները, որոնք հանգամանորեն բացատրեցին իրենց Աթոռի տեսակետները: Նրանց ելույթների ամփոփ շարադրանքը, կազմված իրենց կողմից, ներկայացվում է ստորև.

«Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունը՝ բաղկացած Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպսկ. Աշճյանե, Գերշ. Տ. Արամ եպս. Քեշիշյանե և Պրն. Ոսկեբերան Արզումանյանե, ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի հետևյալ տեսակետները Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսին, Հայ Եկեղեցվո վարչա-կազմակերպչական կանոնագրի մը մշակման վերաբերյալ:

1. Հայաստանյայց Եկեղեցին, վարչա-կազմակերպչական կանոնագրություն մը չէ ունեցած: Միատեսակ և անփոփոխ վարչական դրություններով և կառուցով չէ կառավարված, այլ ջանացած է Կաթողիկոսության վերին իշխանության ներքև տարբեր վարչա-կազմակերպչական եղանակներ որդեգրել ըստ հայ ժողովուրդի կարիքին և բարիքին:

2. Դարերու ընթացքին, Ս. Գրիգոր Լուսավորիչի և Տրդատ թագավորի օրերեն սկսյալ, ան կառավարված է իրերահաջորդ կաթողիկոսներու և ժողովներու կողմե, որոնք միշտ նկատի ունեցած են հայ ժողովուրդին քրիստոնեական և ազգային բարիքները կյանքի հարափոփոխ այն կացություններու և պայմաններու մեջ, որոնց ենթարկված է հայ ազգը:

3. Դարերու ընթացքին գումարված են բազմաթիվ ազգային-եկեղեցական ժողովներ, մասնակցությամբ հոգևորականներու և աշխարհականներու, որոնք կբաղված են կաթողիկոսներու ընտրությամբ, Հայ Եկեղեցվո բարեկարգությամբ և առհասարակ Եկեղեցին հուզող հարցերով:

4. Հիմնական իրողությունն այն է, որ այս բոլորին մեջ, Հայց. Եկեղեցին ամուր և անխախտ պահած է իր միությունը, որ արտահայտված է իր դավանության, ծեսին, եկեղեցական նվիրապետության դրության, եկեղեցական, տոնական, ազգային ավանդությանց մեջ, որոնք եղած են Հայոց Եկեղեցվո առանձնահատուկ ինքնության և միության գետինը: Կաթողիկոսը և իր շուրջ գտնվող եկեղեցական-ազգային ժողովները եղած են այդ միության պահպանման վրա հսկող իշխանությունը:

5. Դարերու ընթացքին եղած են կաթողիկոսական Աթոռի տեղափոխություններ, նոր կաթողիկոսական Աթոռներու ստեղծման պարագաներ, առանց Հայաստ. Եկեղեցվո վերին իշխանության մը որոշումին կամ տրամադրության, այլ պարագաներու և կարիքներու բերումով: Բայց այս բոլորը երբեք չեն խախտած Հայ Եկեղեցվո միությունը, որ վարչական միատեսակ պիտեմի մեջ չէ գտած իր ուժը, այլ ավելի խոր՝ դավանանքի, ծեսի, կարգի և ավանդության հետ կապված տվյալներու մեջ:

6. Երբ երկու կաթողիկոսություններու մեջ եղած են տարակարծություններ, անոնք լուծված են երկու կաթողիկոսություններու փոխհարաբերությամբ, բանակցությամբ և մեկ և նույն Եկեղեցվո պատկանելու խոր գիտակցությամբ, յուրաքանչյուրին իրավասության սահմաններու փոխադարձ հարգումով:

7. Անցյալ դարուն վարչա-կազմակերպչական կանոնագրություն մը մշակելու պարագա ստեղծվեցավ: Ս. Էջմիածնի համար մշակվեցավ Պոլոժենիան, որ կիրարկելի դարձավ ցարական Ռուսիո իշխանության ենթակա հայ համայնքներու համար, իսկ Օսմանյան կայսրության ենթակա հայ Եկեղեցվո համայնքներուն համար պատրաստվեցավ Ազգային Սահմանադրություն անունին տակ ծանոթ Կանոնագրությունը:

Ըստ երևույթին դարձյալ հարկ չզգացվեցավ կամ կարելի չեղավ միաձույլ, միատեսակ կանոնագրություն ունենալ Հայ Եկեղեցվո բաղկացուցիչ բոլոր համայնքներուն վրա գործադրվելու նպատակով:

8. 1915-են հետո Ազգ. Սահմանադրությունը ջնջվեցավ Օսմանյան պետության կողմե, սակայն ան առավել կամ նվազ չափով կգործադրվի նախկին Օսմանյան կառավարության սահմաններուն մեջ ստեղծված պետությանց՝ Լիբանանի, Սուրիո, Հորդանանի, Իրաքի, Կիպրոսի մեջ, մասամբ նաև իսլամական պետությանց մեջ: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը մշակեց իր նոր կանոնադրությունը հիմնվելով Ազգ. Սահմանադրության վրա. իսկ մեր թեմերու մեջ Ազգ. Սահմանադրությունը կգործադրվի որոշ տեղական պատշաճեցումներով:

9. Գեորգ Ե 1917-ին դադրած հռչակեց Պոլոժենիան, որուն սակայն փոխարինող կանոնագրություն մը չդրավ: Ճիշտ է, որ իրմե առաջ ալ Մատթեոս, Գեորգ Դ կաթողիկոսներու, նաև Խրիմյան Հայրիկի օրով փորձեր

եղած էին Պոլսեցիներ բարեփոխելու համար, սակայն արդյունք մը չեղավ:

Գեորգ Ե ապրիլ 7, 1917-ին վերահաստատեց ընտրովի Թեմական Պատգամավորական ժողովները:

10. Ընդհանուր վարչա-կազմակերպչական կանոնագրության մը պատրաստության համար, 1945-են (նույնիսկ ավելի կանուխ) ապին կանոնական և հաջորդական փորձեր եղան Ս. Էջմիածնի մեջ, թե՛ Գեորգ Զ կաթողիկոսի և թե՛ Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ, բայց փաստորեն կարելի չեղավ շոշափելի իրագործումի հանգիլ, հայ ժողովուրդի ներկա կացության պայմաններու բերումով:

11. Այն պայմանները, որոնք պատճառ եղած էին, որ մեր Եկեղեցին չունենար միաձույլ վարչա-կազմակերպչական դրություն մը, կանոնագրություն մը, փոխվա՞ծ են արդյոք:

Տվյալ պայմաններու տակ, Կիլիկիո Ս. Աթոռը միաձույլ կանոնագրության մը պատրաստությունը այժմեական չի նկատեր: Անոր պատրաստությունը ո՛չ կարելի է և ո՛չ ալ օգտակար, նկատի ունենալով հայության ներկա իրավիճակը:

12. Մենք բոլորս ալ նույն և մեկ ապգին, նույն և մեկ Եկեղեցվո անբաժանելի կավակներն ենք: Այդ միությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է սերտ գործակցություն առաջացնել ընդմեջ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և այդ գիտակցությամբ ու հեռանկարով է, որ մենք եկած ենք Մայր Աթոռ որպես Մեծի Տանն Կիլիկիո պատվիրակություն, միասնաբար խորհրդակցելու և որոնելու ճամբաներ, ձևեր և եղանակներ, գործնական ու շոշափելի արտահայտություն տալու համար Հայ Եկեղեցվո միության»:

Նիստի ընթացքում Հայ Եկեղեցու կանոնադրության հարցի շուրջ ելույթներ ունեցան նաև Տ. Սիոն արք. Մանուկյանը, Տ. Ներսես եպս. Պոլսպալյանը և Պարգև Շահբալյանը:

Նիստի վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը հետևյալ եզրափակիչ խոսքով.

«Լսելով Ձեր բացատրությունները և ներկայությունները, եկանք այն եզրակացության, որ հակառակ Մեր սպասումին, Կիլիկյան Աթոռը այժմեական չի գտներ և ոչ ալ օգտակար Հայ Եկեղեցվո կազմական կանոնագրության մը մշակումը և կառաջարկե Մայր Աթոռի և Կիլիկիան Աթոռի միջև տարակարծությունները վերացնել ատիճանաբար, գործակցության ճանապարհով:

Այս մասին Մենք պետք է տեղյակ պահենք Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհուրդը և կանոնադրության Հանձնաժողովը ու ապա Մեր եզրակացությունները հայտնենք հատուկ գրությամբ՝ ուղղյալ Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը անդրադարձավ վերջին երեսուն տարիների մեր եկեղեցական տագնապին ու վերհիշեց 1956-ին Անթիլիասում, 1963-ին Երուսաղեմի ողջագուրումից հետո և 1979-ին իր ապրած ծանր հուսախաբությունները:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը հակիրճ վերլուծումով հաստատեց, որ Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի միջև ստեղծված տագնապը հետևանք է ոչ թե եկեղեցական կամ վարչական անհասկացողությանց, այլ՝ կուսակցական միջամտությունների մեր եկեղեցական կյանքում: Որով Մայր

Ս. Շողակաթ եկեղեցի

Աթոռի և Կիլիկյան Աթոռի միջև միության ամրապնդումը և հաներաշխ գործակցությունը հնարավոր կլինեն, եթե Անթիլիասի Աթոռը և միաբանությունը կարողանան գործել անկախ կուսակցական ապդեցություններից:

Վերջում Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց, որ Կիլիկյան Աթոռի երեք ներկայացուցիչները, ժամանելով Ս. Էջմիածին, ներկայացրին Կիլիկյան Աթոռի տեսակետները կանոնագրի մասին և այժմ վերադառնում են Անթիլիաս՝ Կիլիկյան Աթոռի գահակալին ներկայացնելու Մայր Աթոռիս մտահոգությունները և սպասումները Կիլիկյան Աթոռից, որպեսզի իրապես վերջ գտնի ստեղծված տագնապալի կացությունը Սփյուռքի Հայ Եկեղեցու ծոցում:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ հղեց իր եղբայրական սիրո ողջույնները և բարեմաղթությունները Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսին:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ